



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՍԻՍՏԻԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՊԻՍԿՈՍՈՍԻ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԶԱՐԿԱՆ ԵՄԻՆԱՆԻ ԵՊԻՍԿՈՍՈՍԻ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 59

ՕԳՈՍՏՈՍ 25/7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

ԵՍ ԵՍ
ԵՐԱՆ
ՏՈՐԻՆ
ԿԵԿԵ



ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆՊԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի † Օգոստոս 25/7 Սեպտեմբեր † Թիվ 59

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ

ՓԱՌԱԿՈՐԵԱԼ ԿՈՒՍԷՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՄՍՐ

Գ.

«Ո՛չ քողցես զանձն իմ ի դժոխս (ի գերեզմանի), եւ ո՛չ օսցես սրբոյ քով Տեսանել զապականութիւն: Իմացեալ ինձ զնաւապարհս կենաց. լցուցեալ զիս ուրախութեամբ երեսաց քոց» (Գործ. Բ. 27):

«Այսուհետեւ երանեցեն ինձ ամենայն ազգք: Ահա քնդ իս մեծամեծս Հօրն... Ձխոնաւիս քարճաղցոյ» (Ղուկ. Ա.):

Աստուածամօր Կուսին ամենօրհնեալ մարմնոյն յարութեան և յերկինս Վերափոխման նկատմամբ Ս. Հարց խօսքերն ու վճիռները եթէ ուզէինք յիշատակել, յիրաւի անհնարին պիտի ըլլար մեզ ամփոփել զանոնք առանց հատորներ լեցնելու, քանզի ծով է ընդարձակածաւալ և

նիւթ ամենասիրելի՝ Տիրամօր ամենահաւատարիմ ծառայից համար։ Սակայն որովհետեւ թէ՛ Ս. Գրոց վկայութիւնք և թէ՛ վաղեմի ընդհանրական Աւանդութիւնը մեկնուած է Եկեղեցւոյ Հայրերուն ու Աստուածաբան վարդապետներուն յառաջ բերած պատճառաբանութիւններով, մինք ալ ներկայ յօդուածիս մէջ ի նեցուկ այս հրաշալեաց քանի մը գլխաւոր կէտերու վերածելով պիտի դնենք զանոնք շատ հստակօտիւ, ի հաւատարիմ ճշմարտութեան և ի յաղթանարումն յանդուգն հերքումներու կամ զեղեւկոտ տարակուսանաց։

1. Պէտք է ամէն բանէ առաջ ի նկատի աւանդել որ Աստուծոյ ամէն գործերուն մէջ կը տիրէ կատարեալ ներդաշնակութիւն մը և իր Իմաստութեան դրած բաւական պատճառէն՝ կը հետեւի անշուշտ բնական կամ պատշաճ արդիւնքը։ Այս սկզբունքը կը ստուգուի մանաւանդ բարոյական և հոգեկան առպարէզի մէջ, այլ գլխաւորաբար մարդեղութեան ու փրկկագործութեան անհասանելի խորհուրդներուն մէջ։ Ահա այս է Ս. Հարց հիւսած պատճառներուն հիմնաքարը, ի մասին Վերափոխման, Կ'ուզեն ըսել թէ Մարիամ Կոյս՝ Աստուծոյ Մայր է, ուրեմն վերափոխուեցաւ։ Իբրեւ հաւոր սուր մը հատու է այս պատճառաբանութիւնը։ Աստուծոյ յաւիտենական Բանը, մշածին Որդին, իջաւ Մարիամու օրհնեալ արգանդին մէջ, զոր անպատում սիրով ընդունեցաւ Մարիամ, ուրեմն պէտք է որ զՄարիամ իրեն ամբառնայ և մտցունէ ի փառս իւր։ Մարիամու Որդին Կեանք է գոյացական, զոր եթէ ոք ընդունի ի Ս. Խորհրդեան Սիրոյ, ընդունած կ'ըլլայ յարութեան և անմահութեան սերմը (Յովհ. Ա. 55)։ Եւ ո՞վ ուրեմն անամօթաբար պիտի ժպրհի հաստատել թէ Կենաց Մայրը ապականութեան կողոպտան եղած ըլլայ, և Կեանքը այնքան բացառիկ կերպով իր մէջ բովանդակած ըլլալով, մասնաւորապէս մասնակցած չ'ըլլայ մահու վրայ իր Որդւոյն տարած յաղթանակին։ Ահա ինչո՞ւ յաղթական նօրէն կը պատճառաբանէ հրեշտակային Նարեկացի՝ մշայն ՈՐԴԻ բառին վրայ յենլով ու շեշտելով. «Խնդա՛ և ուրախ լեր յարկ անճառ ծնելոյդ ի քէն անեղդ Աստուծոյ, որ ի նմին յՈրդւոյն քո խնամոց հրաշագարդ փառօք ամբարձար ի կատար աւարտման վերնայինն երկնի լուսապէս, և թեւօք թեթեւութեան հոգւոյն սլացեալ՝ յիմանալիս վերաշուեցեր ի կայանս հանգչիլ... զանեղծին փառաց ճոխութիւն քեզ սեպհականեցեր, Սուրբ Աստուածածին «(Ներք. 2.)։ Եւ Շնորհալին ըսաւ. «Պալատանօք գերագունի անապական քում Ծնողի»։ (Ռարչ. 72.)։

2. Բրնստոս Տէրն մեր զարմանալի կերպով նախանձախնդիր եղած է երկրի վրայ ինքըլինքը իբր ճշմարտապէս Որդի մարդոյ ներկայացընելու։ Եւ այս տշաղոսը առնելու համար, մեր ցեղին պատկանելու համար է որ «Եղեւ ի կնոջե» և առաւ մարմին մարդկեղէն։ Հարիւրուոր անգամներ կրկնած է ի Ս. Աւետարանի. Որդին մարդոյ է որ կ'աւետարանէ. Որդին մարդոյ է որ Հօրը կամքը կը կատարէ. որ կը չարչար-

ուրի, որև փառօք ու կենդանւոյն կը յառնէ գերեզմանէն և նստաւ իր Հօր աջ կողմը, ուսկից պիտի գայ դատելու. զՈրդին մարդոյ տեսաւ ու պակեաւ Յովհաննէս ի Յայտնութեան, տեսաւ փառօք պսակուած, յԱստուածային ամենակարողութեանն. և Ս. Գիրքը կարծես այս տիտղոսով կը գոցուի (Յայտ. Ա., 13. ԺԴ. 14.): Արդ ո՞վ է այդ մարդը՝ որու Որդին է նա, եթէ ոչ ամենեւեմեան Մարիամ. զոր խեղճ մարդկութիւնը իբրեւ մէկ հատիկ անբիծ շուշան տուաւ երկնքին. «Հարուն ընծայեալ յերկրէ յերկինս» (Շնորհալի. Առաջ. Դշ.): Ուրեմն իր մարդկութեամբն ու մարմնովը պանծայող այս թագաւորը պէտք էր որ իր Մօրն ալ սրբազնասուրբ մարմինը փառազարդ ունենար իր քով, իբր շօշափելի ապացոյց իր մարդկութեան փառաց:

3. Աստուծոյ գործը չկրնար ըլլալ անկատար: Մարիամ ինքն ալ անկատար կերպով չյղացաւ զՅիսուս. այլ նախ իր սրտին և հոգւոյն մէջ ընդունեցաւ Աստուծոյ Որդին, և ապա՝ իր մաքուր արգանդին մէջ: Եւ ինչո՞ւ է ուրեմն որ Յիսուս՝ որ ընաւ չյաղթուի ի Երարես, կ'աւարտէր հաղորդակից չպիտի ընէ իր Մայրը իր յաղթանակին. թէ՛ հոգին ու թէ՛ մարմինը փառաւորելով:

4. Թողունք քիչ մըն ալ որ գերեզմանը խօսի: Գերեզմանը ուր դրուեցաւ Մարիամու օրհնեալ մարմինը, թափուր է այսօր. և ո՛չ ոք ի մահացուաց կրցաւ ըսել թէ անոր մարմնոյն մի մասունքն ունեցած ըլլաւ: Արդ, եթէ չյարեաւ, ո՞ւր մնաց մարմինը. ինչո՞ւ հաւատացեալք, այնքան շերմեւանդ երկրպագուներ Աստուածամօր «Քեզ պատահաւ եւմի երկրպագութեամբ ունեղ շնորհ. Տիրամայր, որ Աստուծոյ ի ծառայի կեղծաւանդ սեղծման եղեր պատահաւ» (Նարեկ. Ներք. Ժ2), ինչո՞ւ լքին թողին անոր սրբաւնեալ մարմինը. նա մանաւանդ ինչո՞ւ իր Աստուածային Որդին, որ «Արդարեւեւուն ամեն ոսկրները կը պահէ եւ քոյլ չսար որ անոնցմէ մէկ հատը կորսուի» Աղմ. ԼԴ. 21), որ ծովու խորերէն ու երկրի անդունդներէն կը կորզէ զանոնք, և կը հրամայէ լափով կրակին ու կը պահէ զանոնք, և անծանօթ փոսերուն՝ և ի յայտ կը բերեն, և այսպէս յեա մահու քայքայման իսկ կը փառաւորէ այն փշուրները ոսկեղէն գոնարազարդ տուփերու մէջ, Ս. Սեղաններու վրայ պաշտելութենէ ու բուրումներէ շրջապատուած, ինչո՞ւ իր Մօր մարմինը թողուց լքուած, անպատուած, և չըրաւ իր Մօրը այն պատիւը զոր բրաւ ու կ'ընէ իր բիւրաւոր ընտրեալներուն, ու բարեկամներուն իբր տաճարք Հոգւոյն Սրբոյ և գործիք արգարութեան. և մարմնացեալ լանին առաքաւոր, սրբազործութեան Տապանակը, ամէն սուրբերէն միանգամայն անհամեմատ աւելի մաքուր ու նուիրական խորանն Լուսոյ և Լուսածին Աստուածամօր մարմինը, պիտի մնայ հասարակ ազականութեան մէջ, մուգուած և անյիշատակ մինչև ցեալին զարթնումն փողոյն, աշարժի յերկինս և յերկրի: Եւ զայս թոյլ տուած

պիտի ըլլայ այս Մօրս ամենակարող Աստուածորդին, որդիներու ամենէն յարգադիրը ամենէն սիրողն ու շնորհապարտը. այս Մօր՝ որ իմ չին ներքե մահակից եղաւ իր որդւոյն և զոր իր ձեռքով թաղեց՝ յարութեանը սպասելով: Մենք անարժան որդիք Մախիմու եթէ լսել անգամ չենք հանդուրժեր թէ ի մահու մնացած ըլլայ Տիրամօր Կուսին մարմինը, այլ յեղիւղելով զայն մեր մտքին մէջ անպատու մութութեամբ կը զեղունք. և կ'աշխատենք մտադիւր որ ապացոյցներով հաւանեցնենք ուրիշներն ալ, մինչ զի այս փաստը բերած ատեն գերահանձարն ու սրտեռանդն Աւետիքեան կրցաւ յաւելուլ և զայս. «Յիրաւի ամաչեմ ի բաղդատելս, բայց զի կարի բացայայտէ զգորութիւն այսր պատճառի, յանձն առի զամօթ», արդ՝ կ'ըսեմ, եթէ այդ այդպէս է, հապա՛ Բրիտանոսի հնոցավառ անհուն Աստուածային սէրն առ իւր քաղցր մայրն կրցա՞ւ արդեօք թոյլ տալ, յարութիւն տալու իր գերագոյն իշխանութեամբ հանդերձ (Յովհ. Ե, 21—26), որ իր մօր սրբանունէր մարմինն դառնայ յապականութիւն: Ո՛հ, ի՞նչ անմշտ նախատինք է այդ ընդդէմ Բրիտանոսի: Օ՛հ անդր, ի բաց տա՛ր այսքան յանդգնութիւնը: Ուրեմն. քանի որ թախուր է Մարիամու գերեզմանը, ուրեմն վերափոխուած է փառօք անոր նուիրական մարմինը:

5. Եւ պէտք է խորհիւք որ Յիսուսի մարմինն ու Մարիամու մարմինը՝ «Տնկատաղարթ մարմնոյ Աստուածութեանն խառնարան» (Ներք. Ե), զօրութեամբ Մարմնաւորութեան. մի և նոյն մարմինն են: Ուրեմն պիտի բաժնուի՞, կէսն ի փառս և յանդժութեան, և կէսն ի մոռացոնս և յապականութեան: Ո՛հ, այն ասեն Յիսուս Բրիտանոս ամբողջովին փառաւորեալ չպիտի ըլլար: Զրաժեննք գեղադէշ Լուսինը յաւիտենաչող Արեւէն՝ ձկնի, Տէր, ի հանգիստ քո, դու եւ Տապանակ կսակի արքայ թեան քո»: Ասոր համար Ս. Առաքեալներն «Ընդ լուսոյն լուսեղինացն զօրաց՝ յերգս հոգեւորս... գովէին, գգուէին, մեծարէին, օրհնէին, մեծացուցանէին անճառելի ծայնիւ զմարմին տիրակիր Աստուածածնին՝ Աստուածասնոյց, Աստուածահամբոյր, Աստուածաշօշափ, Աստուածամուխ և գերաշխարհիկ» (Վրդ. ի տես Անթ. Ծաղ.):

6. Եւ մինչև անգամ մեր մարմնոյ յարութեան համար բաւական և համողիչ պատճառը կարծես պիտի պակսէր, բոտ Սրբոց Հարց. Կարծես բնական կ'երևի թէ Աստուծոյ Որդւոյն միացած հոգածին մարմինը յառնէ և յաւիտենաբար կենդանի ըլլայ Աստուածային Անձին միաւորութեան մէջ. սակայն այս հրաշալի վերանորոգումը՝ ժամանակէն առաջ վերակենդանացումը պիտի փափաքէի տեսնել ինծի նման պարզ արարածի մը վրայ ալ. նա զի և Ս. Հարք կ'ուսուցանեն թէ «նա խօսքը Աւետարանին թէ «Բազում մարմինս ցնոցեցեցոց արքոց յարեան» (Մատթ. Իկ, 52, 53) կը նշանակէ թէ Բրիտանոսի հետ չատ սուրբեր յարութիւն առին և յաղթականին հետ համարձան յերկինս, վկայք գերեզման գերու-

թեան : Արդ , ո՞վ աւելի արժանի էր այդ շնորհին՝ նախապար օրինակ հանդիսանալու յարութեան , եթէ ոչ Մայրն Աստուծոյ , որ այնքան սերտիւ միացած է Յիսուսի Մարմնոյն և Արեան , յարուցիչ Աստուծաւորին Տարերքնա՛յ զի այսպէսով Մարիամ որոյ «Սուրբ ծննդեամբը նախնի Կուսին՝ մօրն Եւայի տրտմական անէծքը վերցուեցաւ» . իր յարութեան օրինակ կ'ըլլայ Կնոջ . ինչպէս Յիսուս՝ Առն :— Եւ վերջապէս որովհետեւ նա ընդհանուր մայր է ամենեցուն որդեգրելոց , որոնք իրենց մօր բախտակից կ'ըլլան անշուշտ :

7. Եթէ այնքան անխմանալի առանձնաշնորհումներէ վերջ Մարիամ ուրիշ մարդոց պէս պարտապան գտնուէր մահու ապականութեան , Աստուծոյ իմաստութիւնը անպատճառ պիտի կարենար մեղադրուիլ իբր պակասաւոր , զոր լսել հայնոյութիւն է : Ահա՛ ինչո՞ւ համար մերս երանելի և խորախորհուրդ Աստուծաբանն Նարեկացի կ'ըսէ իմաստութեամբ . «ԳԼԽԱՒՈՐԵՍԻԼ այսօր ի քեզ զիմանալին փարթամ մեծութիւն , որ սլացեալ հասեր ի բարձունս երկնից , իբր անընդունակ ապականութեան և մահու լուծման՝ մարմին՝ յորմէ պատկառեաց ամօթով պարտիքն մահու «Ներք . Ա . ի Վր , գրոյ ան . ի . : Այնքան հիանալի , խորունկ և զգայեալ համալուծ . այսքան սքանչելա՛րաշ ո՞՞ լեցուն և համառօտ . մահը՝ անձնաւորեալ անբաւ չարիք և պաթիծ , մահը՝ պարտք մեղապարտ ընդթեան , Մարիամու անտխեղձ մարմնոյն առջև սարսեցաւ և ամօթով պատկառեցաւ . լայց ո՛չ որովհետեւ անմահ էր ըստ ընդթեան , այլ որովհետեւ անընդունակ էր ապականութեան ու մահու լուծման . ահա այս մարմինը փառազարդ յառնելով , սլացաւ թիթեւ ու հասաւ ի բարձունս երկնից : Բայց այսքան սքանչելիք և շնորհք գրեթէ պարտք մըն էր Աստուծոյ կողմանէ , որ Ս . Կուսին մինչև հիմա ըրած անուր և անհամեմատ շնորհները պէտք էր լրացնէր . ուստի վերափոխումը հարկ մըն էր՝ զիսաւորելու , ամբողջացրնելու համար իմանալի փարթամ մեծութիւնը որ շնորհուած էր Մարիամու : Եւ հետեւաբար կ'ըսէ Շարականն ալ . «Որ յամենայնի ես ԼՅՈՒՑԻՉ բարեխնամ Ս . Հոգի . այսօր պարգեւօք հանգուցեր յանպատում ի կեանս զկուսութեանց զմայրն» (Օրհ . Ա . աւ . փոխմ .) :

8. Եւ Մարիամու մարմնոյ յապականութիւն մասնուիր ի մասնաւորի պիտի հակառակէր Աստուծամօր մէն մի կատարելութեան : Եւ նախ և առաջ անոր Անսրուս Յղորեան , և հետեւաբար իր անեղծութեան , որով չտիրեց անոր վրայ ցանկութիւն և ու է անկարգութիւն զգայարանաց : Արդ , ո՛չ մահը՝ որ անցք մըն է , այլ գլխաւորաբար մարմնոյ ապականութիւնը պատիժ է մեղաց (Ծնն . Բ . 19 . - Հռ . Ե . 22) : Բայց ի Մարիամ ո՛չ մեղքի ո՛չ ապականութեան սերմը , ընտւ երբեք չգտնուեցաւ . անոր մարմինը մարմին մեղաց չեղաւ (Հռ . Ե . 24 . Ը , 3 . — Ա . Կոր . 4 . 50) : «Հրեշտակ ի մարդկանէ , մարմնատեսիլ քե-

րովմէ, անխառն իբրեւ զօդ, մաքուր որպէս լոյս, անշաղախ լստ նմանութեան պատկերի արուեստին բարձրութեան, ծառ կենտոյն անմահչոյ» (Նար. բան 2.) : Եւ այլէն սփռեցաւ մահը՝ տիեզերքի մէջ, իսկ Մարիամ անսղծ «Եղեմին գերահրաշ այն ծաղիկն է որ անմահութիւն կը բուրէ, Մարիամ անարատ մայրն է մմանուէլի» : Ուստի իբրեւ Մայր Աստուծոյ զերծ մնաց հոգին՝ մեղաց ապականութենէն և մարմինը մահու ապականութենէն : Հրաշք մը պէտք էր որ այս Անարատը, այս «Ազատիցն յանգանաց նախաւորն» (օրհ. ա. աւ. փոխմ.) մահէն վերջը արտաուարուէր մահու եղծմամբ. այս տեսակ հրաշք չգործէր Բարձրեալը :

9. Ո՛հ, խորհինք վայրկեան մըն ալ այս չքնաղ արարածին անապական կուսութիւնը : «Ան, կ'ըսէ Պօսիւէ, կարծես Աստուածային բաւական մըն է որ Մարիամու մարմինը կը պահէ ապականութենէ. և անպատճառ պիտի համոզուիք, եթէ խորհիք և ի միտ առնուք թէ ինչպիսի եղաւ իր կուսական մաքրութիւնը» (ճ. ա.) : Եւ ոչ Աստուած կրցաւ նշմարել անոր վրայ ամենափոքր մի արատ. «ԿՈՒՍՈՒԹԻՆԱՆՑ ՄԱՅՐ» էր (Օրհ. ա. աւ. փոխմ.) : Ո՛չինչ անմաքուր իր հոգւոյն մէջ. ամէն իղձ, ամէն շարժում, ամէն փափաք ամենասուրբ էր անոր սրբտին մէջ. իւր մարմինը ճշգիւ գտակաւ համապատասխանէր հոգւոյն մաքրութեան : Մայրութիւնն իսկ կատարելագործեց և փառաւորեց իր կուսութիւնը : Ահա այս անբիծ կոյս մարմինն է որ զերծ մնաց մահու աւերներէն : Այդ սրբամեալ արգանդը, մաքուր, օրհնեալ, լի շնորհօք, հրեշտակացեալ, ինչպէս կրցաւ, ո՛վ Տէր, ապականուիլ : Ո՛հ, ի՞նչպէս կրցաւ աւրուիլ Աստուծոյ պարտէզը, խամրիլ Աստուծոյ շուշանը, կնիքազուրկ ցամքիլ Աստուծոյ աղբիւրը, խաւարիլ այս «Առաւօսն խաղաղութեան և արուսեակ զուարթարար», (Ծն. Յովհ. Կ. Մեծ.), «Աստուածածին Մայր լուսոյ, Սո՛ւրբ Կոյս, լուսեղէն տոճար», «Մայր-Պուրբ սքանչելի Լուսոյն, որ զԱստուածն ամենայն յաւիտեանց յորովայնի կրեց և զԲանն Աստուած ծնաւ ցնծութիւն աշխարհի» (Ժմկ. Քարող Առ.), ինչպէս մոռցաւ այն Սուրբ Մարմինը՝ երկնաւոր փեսայն՝ որ ծննդենէն առաջ և ծննդեան ատեն և ծննդենէն վերջը անապական պահեց զայն բացառիկ հրաշքներով : Այդ հոգը, այդ սիրող, մօրը այս շնորհապարտ Աստուած, այն Յիսուս Աստուած որ Ղազարոսի յարութիւն տալը Աստուածորդւոյն փառաւորութիւն սեպեց (Յովհ. ԺԱ, 4), ինչպէս լքեց իր կուսական օթարանը, որ փոտի ու նեխի. մըթէ իր նախկին ծրագիրը խորտակած չպիտի ըլլա՞ր : «Անարատ Կոյսն որ՝ ըսաւ Ս. Յովհ. Դոմասկացի, երկրաւոր կրից անընդունակ եղաւ, այլ երկնաւոր խորհուրդներով էր սնած, ի հող չգարձաւ, այլ երկինք գոլով անձնաւոր՝ յերկնային խորանն դառեցաւ» : և դարձեալ. «Քեզի Թագաւորն ամենեցուն Աստուած ինչ որ ի վեր քան զընտելիւն է՝ կ'առատաձեռնէ. քանզի ինչպէս ի ծննդեան պահեց զքեզ

Կոյս, այսպէս ի գերեզմանի քու մարմինդ պահեց անապական, և Աստուածային փոխամբ փառաւորեց՝ զքեզ իր մայրը. պարգեւներով ճախացնելով»։ Եւ մեր Շարականը կ'ըսէ. «Այսօր զագահիցն յանցանաց նախաւորն զկուսութեանց մայրն փոխադրեաց Բահն Աստուած»։ Նոյնպէս. «Որ յամենա նի եւ ԼՅՈՒՅԻԶ յարեխնաւ Ս. Հոգի. այսօր պարգեւօք հանգուցեք յանպատում ի կեանս զկուսութեանց զմայրն»։ Օր. և Հարց ա աւ. Փ.)։ Եւ Նարեկայ Սերովսէն մնչեց. «Երանեալ եւ դու ի լեզուս անբիծս ընտրական չրթանց ծաղիկդ Յեսեայ պողոյն մեր կենաց. որ ի դրութենէ խառնութեան քառից յեղանակեալ տարերաց՝ անկցորդ մնացեր ի մասնէ հոգածնելոցս հասարակաց. ոչ բերող ծանրութեան բնականիր համաստեղծս կարեայ, այլ քրովսէօրէն հրաբերան բղխող նշուլից, Ուստի երազ ընթացիւք հետոց հեռայեալ՝ ի վայրն անմատոյց յարիին վերին ընծայեցար, Սուրբ Աստուածամայր» (Ներք. Ը.)։

10. Բայ աստի՛ Մարիամ փրկչակից եղաւ իր Յիսուս որդւոյն հետ, զո՛նելով զանիկա խաչին ներքի, Բաննայուհի յաւիտենից։ «Ուրախ լի՛ր արող փրկութեան. յոյս հաստատութեան մարդիան, միջնորդ օրինաց եւ շնորհաց» (Մեծ. Թ. Իշ. զկնի ինչի)։ «Օգնական և շնորհ աշխարհի» (Մեծ. Դ. Հարց ԴԶ, Պահայ)։ «Միջնորդ կենաց երկոցունց սքանչելապէս համարձակեցար» (Ներք. ԺԹ.)։ «Լուծիչ երկանց բարձող անիծից. ծագումն աւելու յուսոյն ճշմարտի՝ ուրով հերիհաւ խաւարն առաջին»։ Իր դաւկին չարչարանաց ու յաղթանակին մասնակցութիւնը բաւական եղաւ իւր վաղածամ յարութեանը ի գերեզմանէ։ Բանզի Բրիտտոսի պարտ էր չարչարել և այնպէս մտանել ի փառս՝ յարութիւն առնելով, հաւասարապէս չարչարուեցաւ նաև իր անարատ Մայրը իր հոգւովն և մարմնով, միեւնոյն վէրքերուն առաւոր ազդեցութիւնը կրելով, կենդանի պատկեր կամ հայելի խաչեցեալ Որդւոյն, առաւել քան զՊօղոսն խաչակից և զհաբեր՝ ամենակիր տանջանօք. «Կայր առ խաչին եւ մայրն նորա» (Յովհ. ԺԹ, 25)։ Ահաւոր հանճարն Նարեկայ ըսաւ այս հիանալի խօսքը. «Ուրախացիր յաւէտ հրճուանօք՝ բերկրեալդ ի կանայս, որ դըժուարընտել դատտիրարական խաչի վարժեալ կրթեցար, որդւոյ քո՝ կցորդակցութեամբ մշտտեւական ժուժկալութեամբ կրելով զերաչխէպ վշտաց ծնիցելոյդ ի քէն Տեառն՝ մշտաչարչարն մեռելութեամբ անձնատուր տօթով խարուկեալ, իբրև զորոջ անարատ քահանայական նուիրմամբ ի վերայ սիրոյ սեղանոյդ մատուր... մաքուր պատարագ ողջակիզեալ, Վասն այսորիկ ի նուէր քո զենման՝ հրեշտակացն պարք ընդ առաքելոցն գումար դասակցեալ զմիայն արժանիդ պատուեալ գովէին, Սուրբ Աստուածածի՛ն» (Ներք. Թ.)։ Պէտք էր ուրեմն որ նոյնպէս հաղորդ ըլլար իր Որդւոյն յարութեանը յաղթանակին։ Այլա թէ ոչ պիտի զարմանային և հեծէին հրեշտակք երկնից և տիեզերք բովանդակ։

Մենք պիտի կնքենք մեր խօսքը, ըսելով. Աստուած, այն ամէն

չնորհ որ ԿԱՐԵԼԻ էր, որ ՊԱՏՇԱՃ էր, որ ԿԱՐԵԻՈՐ էր, կը պարտէր լինել իր ՄՕՐԸ, և ըրաւ. ուրեմն Մարիամու մարմինը յարութիւն տուաւ և փառօք վերափոխուեցաւ:

Ոսկ լե՛ր, ով թԱԳՈՒՀԻ.

Դու ողորմութեան մայրն ես, դո՛ւ ո՛վ մեր կեանքն, մեր փաղցրութիւնը, մեր յոյսը. ոսկ լե՛ր.

Քեզի՛ կ'աղաղակենք՝ մեզ՝ Եւայի անորումած զաւակները.

Քեզի՛ եր հառաչենք հեռեծելով ու ողբալով՝ այս արհաստայ հովսիսն մեզ:

Աղէ՛ ուրեմն, ո՛վ մեր փ. սաբանը, եւ այն ողորմած աշուրներդ մեզի ւարձո՛ւր.

Աւ եւ որովայնիդ օրհնեալ պտուղը՝ զՅիսուս. զո՞րք մեզի այս անսորանքն վերջը.

Ո՛վ զքա՛ծ, ո՛վ գո՛ովայի, ո՛վ փաղցրիկ Կոյս Մարիս:

(Շարունակեցի)



Ս. ՊՕՂՈՍ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ՝

(Շար.)

Ինչ որ ըսինք Քրիստոսի «Տիրոջ» մասին, լայնօրէն կը պատշաճի նաեւ Քրիստոսի «Որդւոյն Աստուծոյ» եւն.:

Համապատում տւեալարաններու մէջ, երբեմն դժուարաւ կը գտնազանուի ճշգրիտ արժէքը «Որդի Աստուծոյ» տնուան: Սատանային վկայութիւնը ի վիճակի չէ մեզ լուսաւորելու [Մատթ. Գ. 3: Դուկ. Գ. 3: — Մատթ. Ը. 29...]. ոչ ալ հարիւրապետինը [Մատթ. Իւ. 54]: Պետրոսի խոստովանութիւնը, որքան կարելի է եզրակացնել իր երեք տարբեր ընթերցումներէն, կրնայ ոտակ բացայայտ ճանաչում մ'ըլլալ մեսիայի արժանապատուութեան [Մատթ. ԺԶ, 16...]: Երկինքի ձայնը, որ թէ մկրտուելու և թէ համբարձման ժամանակ լսուեցաւ, Եսայեայ ու Սաղմոսայ մէկ խօսքին հանդէպ ունեցած իր կրկին ակնարկութեամբ, նմանապէս Հին Կտակարանի չրջագծին կը վերաբերի կարծես [Մատթ. Ժէ 5=Սաղ. Բ. 7. ևս. ԽԲ, 1]: Անշուշտ յայտնի բան մըն է, նոյն Համապատումներուն մէջ, թէ Յիսուս որդի մը չէ ուրիշներու նման, այլ դերազանցօրէն Որդին է, և թէ՛

¹ Յէս Թիւ 55, էջ 417

մամնսւոր յարաբերութիւն մը կայ իր ու Հօր միջև, և իրաւամբ կրնայ հետեւեցնել թէ այս իր տեսակին մէջ մէկհասակ յարաբերութիւնը գերմարդկային ատտիճանի կը պատկանի: Այսպէս, Յիսուս բնաւ չի շփոթեր իր դիրքը երկնաւոր Հօր հանդէպ, իր աշակերտներուն դիրքին հետ, աւանդ կը սովորեցնէ ըսելու «մեր Հայրը», բայց ինք իր մասին կ'ըսէ. «իմ Հայրս ու ձեր Հայրը»: Բնաւ չըսեր «մեր Հայրը» երբ իր ու մրետներուն համար հաւասարապէս կը խօսի [Գով. ԻԲ, 29: ԺԲ, 32: Մատթ. Ժ, 33: 2, 32: Մարկ. Ը, 38.]: Խնամով ինքզինք ուրոյն դասի մը մէջ կը դնէ Հօր ու ամէնէն բարձր ստեղծութեաններուն միջև. «Փալով այդ աւուր և այդ ժամուան, մէկ մը զայն չգիտեր, եթէ ոչ Հայրը» [Մատթ. ԺԳ, 32]: Իր գործքերով ու խօսքերով ցոյց կու տայ թէ իր ծնունդը իբր որդի՝ վեհագոյն է. և Հրեայք ալ ճիշդ այդ իմաստով կ'ըմբռնեն ըսածը, քանի որ կ'ամբաստանեն թէ կը հայհոյէ այսպէս ինքզինք Որդի Աստուծոյ հռչակելով [Մատթ. ԻԷ, 43.]: Եւ սակայն, միայն Համապատուեցնելով նկատի առնելով, կրնամք սա հարցումն ընել թէ, Բրիստոսի տրուած Որդի տիտղոսը, ուղղակի անոր նախագոյ էութեան կը պատկանի՝ թէ անոր մեսիական պաշտամանց, և իրողութիւն մըն է՝ թէ Համապատուեցնելով չեն որ Որդի Աստուծոյ կ'անուանեն զանի, եթէ սակայն, ինչպէս շատեր կը պնդեն, Ուիոն Թիեռն [= Որդի Աստուծոյ] բառերը խաթարուած են երկրորդ Աւետարանի խորագրին մէջ [Մարկ. Ա, 1]:

Ս. Պօղոսի հետեւողութեամբ — ինչպէս նաև Ս. Յովհաննու և Առ. Սերայեցիի թուղթին հեղինակին հետ — տեղի չի մնար կասկածելու: Որդւոյ հանգամանքը որոշապէս կը վերաբերի նախագոյութեան. «Երբ հառաւ ժամանակաց լիութիւնը Աստուած իր Որդին զրկեց... [Գաղ. Դ, 4], Աստուած, իր Որդին զրկելով մեղքի մարմնոյ նմանութեամբ ու մեղաց համար, դատապարտեց մեղքը մարմնոյն մէջ» [Հռ. Ը, 3]: Աստուած զանի զրկելով չէ որ Որդի կը կարգէ զանի — ինչ որ անհեթեթ է — այլ զանի կը զրկէ՝ արդէն Որդի ըլլալուն համար: Անիկա Որդին է փոխանունութեամբ, և կամ Աստուծոյ Որդին. իր իսկ Որդին, իր սիրոյ Որդին [Հռ. Ա, 3. 9: Ե, 10: Ը, 29: Ա, Կոր. ԺԴ, 28: Հռ. Ը, 32]:

Եթէ ուրեմն Բրիստոս իր երկրաւոր ծնունդէն առաջ Աստուծոյ Որդի էր, այս տիտղոսը չի կրնար զուտ մեսիական անուանակոչում մ'ըլլալ: Սակայն մէջ կը բերուի թէ, Առաքելական դարուն Որդի Աստուծոյ տիտղոսը հոմանիշ էր Մեսիայի. բայց ոչ ոք կրցած է առ այդ պէտք եղած ապացոյցները հայթայթել: Որոնք որ Բ. Սաղմոսին մեսիական իմաստ մը կու տան, Որդի Աստուծոյ յորջորջումը անշուշտ պէտք է նկատեն Մեսիայի մէկ տիտղոսը. բայց ինչդիրը տարբեր է, զի իսկապէս պէտք է գիտնալ թէ, արդեօք Պօղոսի ժամանակակից Հրեայք. Որդի Աստուծոյ բացատրութիւնը լսելով, կրնային և պարտաւոր էին առանց այլեւայլի իմանալ թէ խոստացուած Մեսիան կը նշանակէ:

Իրապէս ասոր հակառակ կ'ելլեն բոլոր նշաններն ալ՝ Որդիներն, որ քաջ հմուտ էր անոնց, կը ծաղրէր զԿելտոս ինչո՞ւ որ ասի Հրէից ըսել տուած էր թէ Աստուծոյ Որդին Երուսաղէմ պիտի գար. «Բնա՛ւ, կը կրկնէ Որդիներն», հարազատ Հրեայ մը այնպէս չպիտի խօսէր՝ ճշմարիտ Հրեայք, ընդհակառակն, մեզ կը հարցնեն թէ ի՞նչ կը հասկնանք մենք՝ երբ Որդի Աստուծոյ յիշատակութիւնը կ'ընենք» (Ընդդէմ Կելտոսի, Ա, 49)։ Պահ մը ենթադրելով որ այս տիպիսի Մեսիայի սովորական անուններէն մին ըլլար, այն ատեն յաճախ պէտք էր անոր հանդիպած ըլլայինք հրէական մատենագրութեան մէջ. արդ, անոր և ոչ մէկ հետքը կը նշմարուի, բացի Եզրի չորրորդ Դրքէն, որ յետագոյն է Քրիստոսի թուականին ու շատ անգամներ փոփոխութեան ենթարկուած քրիստոնեայ ձեռքերէ, ու չգիտցուիր ան ալ ո՞ր աստիճանի։ Անվաներ գիրքերու լռութիւնը կը հաստատուի սրբազան հեղինակներու խօսուածքէն։ Ասոնց համար, Մեսիան իրապէս Աստուծոյ Որդին է, բայց Որդի Աստուծոյ անունը համարժէք չէ Մեսիայի հանգամանքին։ Եւ այս՝ ա՛լ աւելի ճիշդ է Ս. Պօղոսի համար, որ ամէնէն աւելի ինք չի շեշտեր Յիսուսի Մեսիական հանգամանքը։ Պօղոս իբր յատուկ անուն կը գործածէ Քրիստոս անունաւ կոչումը, առանց միտ զնելու անոր ստուգարանական իմաստին, որ մեծ շահեկանութիւն մը պիտի չունենար իր ընթերցողներուն համար։ Իր դաւանանքին կարգախօսը, իր հանգանակին համառօտութիւնը ոչ թէ «Յիսուս է Քրիստոսը» այսինքն Մեսիան՝ բացատրութիւնն է, այլ «Յիսուս է Տէրը» խօսքն է։ Ասոր համար, անա, ոչ միայն նոյնութիւն մը չի հաստատեր Քրիստոս անունն ու Որդի Աստուծոյ բացատրութեան միջև, այլ և ոչ իսկ կապակցութիւն մը կը նշանակէ այն երկու բանաձեւին միջև։ Որով, եւս աւելի չուսուցաներ ինք՝ ինչ որ այլադասան հեղինակներէ ամանք այնքան թեթեւօրէն կը վերադրեն իրեն. թէ Յիսուս՝ իր յարութեան ատեն, միանգամայն կ'ստանայ իր ընդհանուր իշխանութիւնը իբր աէր, իր մեսիական արժանապատուութիւնը և իր աստուածային սրբեմնունդը։

Մենք հոս համառօտակի ցուցադրենք թէ որո՞նք են նախագոյ

¹ Արդէն տպագրուած է թէ Այաւնայ ու Եւայի Կենսագրութեան մեջ [42], ինքնագրութեամբ է Քրիստոսի փերաբերեալ անցքը՝ իբր Որդի Աստուծոյ *Kautzsch, Die Pseudepigraphen des A. T., Tübingen, 1900. p. 520*։ Նմանապէս փոփոխուած է Ենովքայ գրքին այն անցքը ուր կը խօսուի Որդի Աստուծոյ մասին [ձե, 2]։ Տե՛ս, Անդ էջ 308 — Ուրեմն միակ փաստը Դ. Եզրի մէջ պէտք է ըլլայ Դ. Եզր. ԺԴ, 32 37, 52։ Իսկ Դ. Եզրի է, 28 համարին մէջ ուր ըսուած է «պիտի յայտնուի իմ Յիսուս որդիս» կարեւորութենէ զուրկ է, քանի որ բոլորովին փոփոխուած է ան ինչպէս ուրիշ թարգմանութիւններէ յայտնի կ'երևի։ Կրնամք նաև հոս յիշատակել Սաղմ. Սոյում. ԺԷ, 23, ուր Աստուած կը խօսի Մեսիայի վրայով իբր իր իսկ Որդւոյն [Ոգ. Բ, 7] տառնց հոն Որդի Աստուծոյ անունաւ կոչու Մեսիան, ինչ որ շատ տարբեր է։

Քրիստոսի մասին Ա. Պողոսի ըրած նկարին գլխաւոր գիծերը¹ :

1. Քրիստոս ամէն արարածներէ գերիվերոյ է [Եփես. Ա, 21]. նոյնինքն արարիչ է [Կող. Ա, 16], և պանպանիչ աշխարհի [Կող. Ա, 17]. ամէն բան իրմով, իր մէջ, և իրեն համար է [անդ]: Պատճառ ներգործիչ. օրինակելի և վերջնական ամէն գոյութիւն ունեցող բաներուն, ինք ուրեմն Աստուած է:

2. Քրիստոս պատկերն է անտեսանելի Հօր [Բ. Կոր. Դ, 4: Կող. Ա, 15]. Որդի է Աստուծոյ, բայց ո՛չ ուրիշ որդիներու նման. ինք անհաղորդական կերպիւ որդի է, ան է Որդին սեփական Որդին, սիրելի Որդին ու միշտ ալ այնպէս եղած է [Բ. Կոր. Ա, 19: Հռ. Ը, 3, 32: Կող. Ա, 13: Եփես. Ա, 6 եւն.]: Ան ուրեմն աստուածային էութենէն ծագում ունի և համագոյակից է Հօր:

3. Քրիստոս առարկան է Աստուծոյ վերապահուած օրէնքներուն [Հռ. Թ, 5: ԺՁ, 27: Ա, Տիմ. Գ, 16 եւն.], անոր ալ ազօթքներ կ'ուղղուին՝ ինչպէս Հօրը [Բ. Կոր ԺԲ, 8—9: Ա, Կոր. 1, 2 եւն.], անկէ ալ այնպիսի բարիքներ կ'սպասուին՝ որոնք միայն Հօրմէն կարելի է ընդունիլ, չնորձքը, ողորմութիւնը, փրկութիւնը [Հռ. Ա, 7: Ա, Կոր. Ա, 3: Եփես. Ա, 2. եւն. եւն.], անոր առջև ամէն ծունկ պէտք է խոնարհիլ երկինքը, երկրիս վրայ ու դժոխոց մէջ [Փիլ Բ, 20.]: Ինչպէս ամէն ծունկ կը խոնարհի երկրպագելու Բարձրելոյն վեհութեան առջև:

4. Քրիստոս ունի բոլոր աստուածային ստորոգելիները. յաւիտեանական է, քանի որ ամէն արարածներուն մէջէն անդրանիկն է և ի յաւիտենից կայ [Կող. Ա, 15—17], անփոփոխելի է, քանի որ ի կերպարանս Աստուծոյ է [Փիլ. Բ, 6], ամենակարող է, քանի որ իշխանութիւն ունի ոչինչէն ի գոյ ածելու [Կող. Ա, 16]. անունն է, քանի որ իր լիութեամբ ամէն ինչ կը լեցնէ [Եփես. Դ, 10: Կողոս. Բ, 10]. անվախճան է, քանի որ անոր մէջ կը բնակի աստուածութեան լրումը, կամ լաւ հետ՝ ինք արդէն լրումն է աստուածութեան [Կողոս. Բ, 9]. ինչ որ սեփական է միայն Աստուծոյ՝ իրեն սեփականութիւնն է յատուկ. Աստուծոյ դատաստանը՝ Քրիստոսի դատաստանն է [Հռ. ԺԴ, 19: Բ, Կոր. Ե, 10], Աստուծոյ Աւետարանը՝ Քրիստոսի Աւետարանն է [Հռ. Ա, 1, 3: ԺԵ, 16, 16]. Աստուծոյ Եկեղեցին՝ Քրիստոսի Եկեղեցին է [Ա, Կոր Ա, 2: Ժ, 32: Հռ. ԺՁ, 16], Աստուծոյ արքայութիւնը՝ Քրիստոսի արքայութիւնն է [Եփես. Ե, 5]. Աստուծոյ Հոգին՝ Քրիստոսի Հոգին է [Հռ. Ը, 9, 14]:

5. Քրիստոս միակ Տէր է [Կոր. Ը, 6]. կը նոյնանայ հին դաշանց Ենովայի հետ [Ա, Կոր, Ժ, 4, 9.], Եկեղեցին իր արիւնով գնող Աստ.

¹ Տե՛ս *Théologie de S. Paul*, T. I. p. 398—405, 438—451, T. H. p. 181—218...

ուածն է ան [Գործ. Ի, 28], ան՝ «մեր մեծ Աստուածն ու Փրկիչը Յիսուս Քրիստոս» է [Տհս. Բ, 13]։ Նոյն իսկ «ամէն բանէ վեր բարձրացող Աստուածն» է ան [Հռ. Թ, 5], իր անհուն վեհագունութեամբ տիրապետելով ընդհանուր արարածներուն։ Ու թէ որ առանց վերագիրի չէ կոչուած Աստուած՝ պատճառն այն է որ, Պօղոսի լեզուով, Աստուած կը նշանակէ Հօր անձը, և Հօր ու Որդւոյն մըջև անձնական նոյնութիւն մը ենթադրել՝ հակասական է։

(Շարունակելի)

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԿՂԲԱՆՑ ՎՐԱՅ¹

Ա.

(Շար.)

Այդ է առաջին քայլն որ իմաստութեան կ'առաջնորդէ. «Ակիզրն իմաստութեան՝ երկիւղ Տեառն է» կ'ըսէ Հոգին Սուրբ։ Եւ արդարեւ մարդը իւր պարսուց մէջ պահելու, և եթէ անկէ չեղած ըլլայ, զինքը նոյնին վերադարձնելու ամենայարմար միջոց և պատճառն է։ — Անտաւրակոյս զԱստուած սիրելու ենք, վասն զի անհունապէս բարի և անհունապէս սիրելի է. զինքը սիրելու ենք, զի ինքն մեր Հայրն, մեր Աւրարիչն է, և զի ինքն առաջ զմեզ սիրած է, բայց իրմէ վախճալու ալ ենք, քանզի անհունապէս արդար է, և եթէ մեզքը այս աշխարհիս մէջ չպատժեր, աւելի սարսափելի կերպով հանդերձեալին մէջ պիտի պատժէ։ — Ո՛րպիսի սարսափ չպիտի զգայինք մոլութենէն, և սրպիսի սէր առաքինութեան նկատմամբ, եթէ Աստուծոյ արդարութեան վրայ առաջին ծանօթութիւնները միայն ունենայինք։ Մենք մարդիկներէն կը վախճանք, կը խիթանք, անոնցմէ, որոնք կարողութիւն մը ունին, ուրոնք կրնան զմեզ բանտարկել առաջ, զմեզ մեռցնել առաջ։ Մեզի պէս մահկանացու մարդիկներ են, մեզի պէմ ինչ կրնան ընել։ «Վախցե՛ք անկե, կ'ըսէ Յիսուս Քրիստոս Տէրն մեր, «վախցե՛ք անկե, որ մեռցնելն ետէր, դժոխք նետելու իշխանութիւն ունի, այո՛ կ'ըսեմ ձեզի, վախցե՛ք անկե»։ (Ղուկ. ԺԲ, 5)։ Բոլոր միւս բաներն ձեզի չեն կրնար վնասել եթէ ոչ ժամանակ մը, իսկ միայն կրնայ նոյն իսկ յաւիտենականութեան մէջ իւր պատուհանները տանիլ։ Այս խորհրդածութիւններով էր, որ աղանաւոր ծերունի մը, Անտիոքոսի հալածանաց ժամանակ, հակադաս ամէն հնարք և ամէն բռնութեանց, անդրդուելիօրէն մերժեց օրէնքէն արդիւնած միտէն ոչ միայն ուտել, այլև նոյն իսկ ուտել կեղծի։ Զինքն ստիպողներուն կը պատասխանէր Եղիազար։» Երբ կաթնակայի այ-

¹ Թիւ 56, էջ 438։

սօր, թունադոսեցող իմ պատիւն եւ խեղճս. ճանաչեցեալ զերծանիլ, կրնամ միթէ մոռնալ թէ, կը ծառայեմ Աստուծոյ մը. որուն արդարութեան չեմ հնար խռատափիլ այս կենցաղիս մէջ. եւ որուն իշխանութիւնն իմ վրաս պիտի տեսնէ զերեզմանէն ալ անորհն: Այսպիսի վեհանքն խորհրդածութիւններէն իւր սուտ բարեկամներն զայրանալով, դաժին հետ մարանեցան զինքը փութով մեռցնել տալու համար: Պատկառելի ծերունին մերկացուցին, տարածեցին, կապեցին, իսկ դաժիններն ամենազառն գործիներով զինեալ, սկսան զայն անդադար զարնել, և զինքը մեռցնելէն առաջ, անոր հազար մահեր կրել տալ: Այդ անհնարին յաւոյ մէջ վեհանքն ծերունին եղիազար, իրեն նահատակութեան վկայ և յաղթութեան վարձատրիչ Աստուծոյ ուղղելով իւր խօսքը, հեծելով կը գոչէ. «Ի՞նչ գիտես. ով Աստուած իմ թէ, կարենալով այսպիսի դառն մահուանէ մը զերծանիլ, նախանձար ընտելի աւս ճանաչեցեր, զորս կը կրեմ, կենաց ամէն հաճոյից. գիտես նաեւ թէ իմ ընտրութեանս մասին զոչացած չեմ. զայն յօծար կառօքս կը հաստատեմ, քեզի անհաճոյ չըլլալու երկիրդէն դուրսը:

Ոչ նուազ հիւանդի, և ոչ ալ կրօնիս ժամանակագրութեան մէջ ընդ միշտ պահուելու նուազ արժանաւոր են մեծաւորի հաստատամտութիւնն, և վեհանքն արհամարհանքն կենաց. զոր Աստուծոյ երկրւոյն ներքեցեց Անգղիոյ անուանի Թովմաս Մուրին: Հեկտիկոս Ը. որ անոր յարգը գիտէր, տէրութեան առաջին պաշտօնին բարձրացուցած էր. բայց այս շնորհն շատ չտեւեց: Այս իշխանն, զինքն Հռովմայ եկեղեցւոյն պարաւանդող կապերը խզած և Անգղիական եկեղեցւոյ գլուխ հրատարակած ըլլալով ինքզինք, ուղեց պարտաւորել Դիւանապետը, որ իւր այս պաշտօնը դառնալով երդում ընէ իրեն, զոր իւր ամէն հալաւ տակներէն կը պահանջէր: Թովմաս Մուր համոզուած ըլլալով որ երդումն իւր կրօնքին հակառակ էր, մերժեց համակերպիլ: Փաղաքշանք, խոստմունք, սպառնալիք, ամէնքն ալ ի գուր ի գործ տրուեցան այս անդրդուելի մարդուն շուանութիւնը խլելու համար: Հեկտիկոս Ը. այս հաստատամտութիւնէ զայրացած, զայն բանտարկել տուաւ: Իւր բարեկամներն կը ջանային զինքը համոզել զիտելով թէ չէր կրնար ինքն Անգղիոյ Մեծ Խորհրդէն տարբեր կամք ունենալ: Այդ մեծ մարդն իրենց պատասխանեց. «Եթէ իմ կարծեացս մէջ եւ միևսիլ ըլլայի, իմ յոյսերուս (կարծեացս) մասին պիտի կասկածեի, բայց ես բոլոր եկեղեցիներէն հետ ունիմ, որ Քրիստոսնեց Մեծ Խորհուրդն է»: Իւր կիներն զինքը կ'երդունցնէր թագաւորին հազանդիլ, և իւր զաւակաց համար ապրիլ: Քանի՞ տարի, կը կարծես որ, ըսաւ անոր կրնամ դեռ ապրիլ (վախճանուերկու տարեկան էր այն ատեն). քանի տարի անցի պատասխանեց կինը. Ահ անուսինս. կ'ուզես որ աշխարհիս վրայ ապրելիք քանի տարիները յաւիտեական կենաց նախադասեմ պատասխանեց: Դիւանութեան բեմը ելաւ, դաժին ներկայացուց իր գլուխը այն զիտի անվրդով հանդարտութեամբ և հաստատակամութեամբ. որոնք Քրիստոնէութեան ասույն հաններուն պատիւ բերած են:

(Շարունակելի)

Ն. Մ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Վ Ա Ն

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Ամենատուրը Հաղորդութեան Համաժողովը, ինչպէս քանի մը անգամ մասնաւորապէս ծանուցինք մեր թերթին մէջ, այս տարի տեղի պիտի ունենայ Աւստրիոյ մայրաքաղաք՝ Վիեննայի շքեղ ուստանին մէջ: Աւստրիոյ-Հունգարիոյ միապետութիւնը այն հապուած գիւտ պետութիւններէն մին է՝ որ դեռ կը ճանչնան, իրենց Սահմանադրութեան մէջ, Աստուծոյ, իր Քրիստոսին և իր Եկեղեցւոյն իրաւունքները:

Համաժողովը պիտի սկսի 12 Սեպտեմբերին, և պիտի աւարտի 15ին, հսկայ թափօրով, այն օրը՝ որ ըստ լատին արարողութեան կը զուգագիպի սրբազնաւորը Անուան Մարիամու Տիրամօր Կուսին:

Դեռ ամենուն յիշողութեան մէջ պէտք է ըլլայ թէ ո՛րպիսի տկնաբանի շքեղութիւններ պարզուեցան տարի մը առաջ Կաթողիկէ Սպանիոյ մայրաքաղաք Մադրիտի մէջ՝ առթիւ նոյն Համաժողովոյ, որու մէջ ներկայ գտնուած էր մեր Ամենապ, և Գերբեջ. Հաղեւոր Տէրը, և որու միտքարկան մանրամասնութիւնները մենք գրած էինք Արձագանցիս Ա. տարուան այլեւայլ թիւերուն մէջ: Սրբազան Քահանայապետին հայրական սիրտը մեծապէս միտքարկած էր յայնժամ Ալփոնսո օֆ. Երիտասարդ Թագաւորին ցոյց տուած հաւատոյ ու բարեպաշտութեան արտայայտութիւններով: Երբ ամենուրեք՝ կ'երթայ ու կը յայտնուի աշխարհական ընկերութեանց և կառավարութիւններու անկրօնութիւնը, լաւ է տեսնել որ վաղեմի և փառապանծ քրիստոնեայ ազգերու ներկայացուցիչները իրենց դարուս պերճանքը կը խոնարհեցնեն դարերու Արքային խոնարհութեան առջև: Այս տեսարանը հնար է աւելի մեծ չքելովեամբ պիտի պարզուի ի Վիեննա քան ի Մադրիտ:

Նորին Վեհափառութիւն, Ժերմեակաւորքն և առաքինազարդն Փրանկիսկոս-Յովսէփ Կոյսը—թագաւոր ներկայ պիտի դառնուի Համաժողովը բացող թափօրին և փակող վերջնական Սրահութեան նոյն օրը՝ 16. Արհիդուքոներն պիտի հետեւին մեծ թափօրին՝ քաղքին մէջ: Արդէն ինչպէս գրած էինք, Կոյսն ընդունած է Համաժողովին պաշտօնական պաշապանութիւնը, իրեն յիշուի արժանաւոր օգնական մ'ունենալով յանձին Կորդ, Նա'կըլի որ Արքեպ. է Վիեննայի, որ յայտնի թշնամի է վարդապետութեանց ամենափոքր թեթեւադմին: Փրանկիսկոս—Յովսէփ չէր կրնար մոռնալ թէ ինքն է՝ «Առաքելական Վեհափառութիւն, թագաւոր Արքայադէրու, պաշտօնական պաշտպան Ղպտի Եկեղեցւոյ» ու ծնընդեամբ ժողովուն է այն Հապապարկեան Հռոգպփոսի որուն առ. Ս. Հաղորդութիւն ունեցած ջերմեանդութիւնը մրցած են հռչակելու և փառաւորելու Պատմութիւն, Բանաստեղծութիւն և Արուեստը:

Քանի որ Կոյսը յանձնառու կ'ըլլար Համաժողովի պաշտպանութեանը, արդէն ինքնին ապահովուած էր պաշտօնական աշխարհի մասնակցութիւնը: Հետեւեալը Սեպ. 15. ժիսակատարութեանց մէջ պիտի տեսնուին պաշտօնական մարմինները, Պատգամաւորական ժողովը, թաղապետութիւնը և Համապատրանը: Պիտի տեսնուի մանաւանդ արքունիքը իր պալատականներով, հնախօսական գունագեղ տարազներով Հապապարկեան ազնուորերոյ վաղեմի կամ Մարիա Թերէզայի ժամանակներու անսպասար համազգեստներով, իշխաններ, Արհիդուքոներ, Ազնուազարմ բաւրիշներ, ամբողջ Արքունիքը՝ ի գլուխ ունենալով Ժերմեան Վեհապետը, այնքան պերճափայլ իր վրայ ցոլացնելով դարերու փառաւորութիւնը, այնքան դժբախտ՝ մինչև իսկ հին ողբերգութեանց գիւցազները ոմար համամատուցութեամբ նուազ անիրական կը թուին, այնքան մեծ և միշտ արժանաւոր՝ որ քննադատութիւնը, ինչպէս և ժամանակը, իր վեհ զգալին լուիկ մեծափառութեան առջև զինաթափ կը տեսնուին:

Կոյսը — թագաւորը, պիտի չի շատանայ Համաժողովի արարողութիւններուն մասնակցելով միայն՝ իեռ շատ ուրիշ նշաններով ցոյց տուաւ նա թէ ո՛րքան կարեւորութիւն կուտայ իւր Կաթողիկէ Վեհապետի մը նշանակութեան: Ահա տար համար է որ Փրանկիսկոս — Յովսէփ՝ Քահանայապետական Պատուիրակին արամադրութեան ներքեւ դաւմանաւոր կառախումբ մը կազմուած Կայսերական կառքերէն, որ պիտի երթայ Հռոմ՝ բերելու համար նոյն Պատուիրակը մինչև Լինց, ուսկից աւելի շքեղ ընթացքով մը պիտի ուղեւորի նաւով Դանուբ գետոյ վրայէն մինչև Վիեննա, իսկ Մայրաքաղաքին մէջ Քահանայապետին ներկայացուցիչը բնակութիւն պիտի ունենայ Կայսերական Պալատին մէջ:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Անցեալ շաբաթ օր, 18131 Օգոստոս, Ամենապատիւ և Գերերջանիկ Հագեւոր Տէր, գումարելով տեղական կղերն ու ժողովրդապետները, հետեւեալ յայտարարութիւնը կարգաց տնոնց տալէ, յետոյ բերանացի մեկնութիւններ և յորդորներ ալ տալցնելով:

Կ. Պոլիս, Թիւս 31 Օգոստոս 1912

Կարեւոր յայտարարութիւնք առ տեղական կղերն և առ ժողովրդապետս Աւագ Թեմիս:

1. Կը յայտարարենք որ եթէ տակից ետե ո՛ր և իցէ եկեղեցւոյ մէջ Զայնաւոր պատարագ ընել հոգի ըլլայ կամ բոս սովորութեան և հանգիստութեանց և կամ բոս պայմանաց կտակաւորութեան և արգիլութիւն, և կամ Կաթողիկոս Պատրիարքի տնտեսան յիշատակութեան ընդգրկութիւն ցոյց տրուի և կամ այս առթիւ տղմուկ ելլէ, այդ եկեղեցին եկեղեցական արգելքի տակ դնելու պատրաստուած ենք, ի խղճէ բոս եկեղեցական օրինաց: Եւ այլեւս չենք կրնար թերանալ այս տրամադրութեան մէջ: Իսկ այս արգելանաց մանրամասնութիւնները, Աստուած չընէ՝ երբ պարագան ներկայանայ առանձին գրութեամբ մը պաշտօնապէս պիտի հաղորդենք այն եկեղեցւոյ ժողովրդապետին:

2. Քանի որ Լուսաւորիչ Ուսումնարանը Սուրբ Աթոռէն ընտրուած հերձուածող ժողով և եկեղեցական օրինաւոր իշխանութեան դեմ մաքառող ապստամբ և հերձուածող անձինք խուժելով գրաւեցին, եթէ երբեք վերոյիշեալ ուսումնարան այդ անձանց վարչութեան և հակողութեան ներքե բացուելու ըլլայ, ի խղճէ պարտաւոր ենք յայտարարելու թէ Կաթողիկէ ժողովրդապետք և խոստովանահարք պարտաւոր են հրապարակաւ և խստիւ արգիլել ծրարաց որ այլեւս իրենց գումարները հոն չի խրկեն, ինչպէս իրօք ալ չեն կրնար խրկիլ: Եւ այն ուղղափառ ծնողք որ կը յանձնեն իրենց զաւակները վերոյիշեալ ուսումնարանին մինչև որ զանոնք ետ չառնուն, արձակումէ և Սուրբ Հաղորդութենէ զրկուին:

3. Քանի որ վերոյիշեալ ուսումնարանի շէնքը բարերարներէ յատկացուած է, ոոսկ կղերանոց ըլլալու համար, ինչպէս ամենքնիք ալ լաւ գիտէք, և ձեզմէ քանիններն ալ հոն դաստիարակուած են, և մեր երջանիկ, նախարար Ազարեան Կաթողիկոս, տաժամանակեայ թոյլ տուած էր անոր գործածութիւնը միայն ի նպատակ զարգացման կաթողիկէ մանկըտւոյ, և այն ալ բացարձակապէս և ուղղակի իւր հակողութեան տակ, այդ շէնքը բնաւ դադարած չէ կղերանոց ըլլալէ: Եւ հետեւապէս անոր գրաւումը ապօրինի և յանցաւոր յաւերժութեան մը և անիրաւութիւն մըն է մեր Աստուածապահ Աթոռոյն հանգէպ. որով այսօր կը յայտարարենք ձեզի պաշտօնապէս այն պարտաւորութիւնը զոր տեղական կղերն ունի գրաւորապէս բողոքելու կառավարութեան այդ յաւերժութեան և անիրաւութեան դէմ:

4. Ինչպէս ամբողջ քահանայք նուիրապետութեանս, լայց յատկապէս Աւագ Թեմիս տեղական կղերը որուն օրինաւոր և անընդմիջական Հովիւն է Կիլիկիոյ Կաթողիկոս Պատրիարքը, կը պարտաւորին ի խղճէ, առաջի Աստուծոյ, մէկ սիրտ և մէկ հոգի միանալ անոր անձին հետ, ո՛վ և որպիսի ոք ըլլայ այս տնձը, և զինք պաշտպանել ամենայն անձ նուիրութեամբ և ազդեցիկ միջոցներով, այս ալ ի շինութիւն հաւատացելոց և օտարաց: Այդ ազդեցիկ միջոցներէն մին ալ, ինչպէս յայտնի է, գիմում ընելն է կառավարութեան արդարութեան, հետեւապէս կը յայտարարենք այսօր ձեզի թէ կառավարութեան մուտուցուելիք աղբիւրագիր մը պատրաստելով պարտիք ստորագրել, որով խնդրուի արդարութիւն գործադրուի մեր օսանակի եղած կաթողիկոսական և պատրիարքական ամենայն իրաւանց համար ի պաշտպանութիւն ազատութեան Կաթողիկէ Սուրբ եկեղեցւոյ:

*. Իբրեւ ներկայացուցիչ Ամենապատիւ Հագեւոր Տեսաւ՝ Վիեննայի Ս. Հաղորդութեան Համաժողովին ներկայ պիտի գտնուի Արհի. Պետրոս Արքեպիսկոպոս Գօյունեան, որ Սեպտեմբեր 9ին Հռոմէն պիտի մեկնի գէպ ի Վիեննա:

Նոյնպէս Հայ Կաթողիկէ նուիրապետութեան ներկայացուցիչ պիտի ըլլայ նոյն Համաժողովին մէջ Արհի. Ստեփան Նպիսկոպոս Իսրայէլեան, վիճակաւոր Խորրերգու, որ տրգէն մեկնած է ի Վիեննա:

Քաղաքապետութիւնը պիտի մասնակցի նմանապէս Համաժողովին. Քաղաքապետական ժողովը, որ ինչպէս Արձագանգի մէջ գրած էինք, տեղական յաղթութիւն մը տարած և հարկը վաճառելու ռազմական միջոցներու վրայ յաջողած էր հարկը երեսունը հինգ տոկոսներով բարձրացնել, իր բոլոր տոկոսներով ի գործ կը դնէ այս տնտեսական ծանրութեան փառաւորութեանը համար, և անոր հանդիսութիւնները աւելի պիտի պերճացնէ իր ներկայութեամբ: Եւ յիշուի քաղաքապետ Նոյմայէր Վիեննական օրոգորողներու խումբին պաշտօնապէս յայտարարեց թէ քաղաքապետութիւնը այս Համաժողովը կը նկատէ Վիեննայի համար տարուան ամենամեծ դէպքը, և թէ ինքը հարկը հաղորդող օտարական այցելուներու առջև Համաժողովը պաշտօնապէս պիտի ընդունի յանուն քաղաքի:

Համաժողովին յառաջ բերելիք ամենէն կարեւոր յաջողութիւններէն գլխաւորը պիտի ըլլայ Ս. Հաղորդութեան հանդէպ պարզուած փառաւորութիւններու միջոցաւ զարթոյցանել հաւատքը և բարեպաշտական զգացումները ժողովրդեան հոգիներու մէջ, և Վատիկանու խորհրդէն ծերունի Քահանայապետին սիրտը պիտի տրոփէ ցնծութեամբ, և իւր վեհ քանարն մէջ պիտի սփռուի իւր տառապանքներէն եւ որչափ այ խեղճ ըլլան մեր հանդիսութիւններն ու թափօրները և ծափահարութիւնները՝ Անոր նկատմամբ որուն պատուանդան է ոտքերուն երկիրը և փառարանիչ՝ Հրեշտակաց գունդերը, սակայն և այնպէս սիրով պիտի ընդունի իր տեղծութիւններուն երկրպագութիւններն ու գովաբանութիւնները:

Արհի. Արքեպիսկոպոս Բրթի, Աթէնքի վիճակաւոր և Յունաստանի Առաքելական նախարկ, այս օրերս հառած է ի կ. Պոլիս, ուր իր քաղցր յիշատակը գուրգուրանքով պատահող բարեկամները ամենասիրտիւ ընդունելութիւն մը ըրին իրեն: Այցելութիւն տուաւ տու Ամենապ. Գեր. Հոգեւոր Տէր, որ սիրայօժար փոխանակեց այս այցելութիւնը:



Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

* Նախարարաց Խորհուրդը որոշեց 3 միլիոն դր. յատկացնել քօլերայի դէմ պայքարելու համար:

* Վարչապետ Հագի Մուխթար փաշա, ինչպէս նաև Սալիտ փաշա իրենց հիւանդութիւնը դարմանելու համար, կ'ըստէ թէ Եւրոպա պիտի երթան քանի մը օրէն:

* Թէքվիշէն կը հեռագրուի թէ Գարատաղցիք, որոնց կ'ընկերանային համազգեստ հագած զօրականներ, յարձակում գործեցին Ավանքօլաո գիւղին վրայ և բռնուկ կրակ ըրին: Ում. զինուորները պատասխանեցին: Ընդհանուր շատ խիստ եղաւ. և քանի մը ժամ տեւեց: Գարատաղցիք նահանջեցին:

* Եգէական կղզիներու անուցները փոխուած. — Իտալական կառավարութիւնը օտար տէրութեանց զեկուցած է որ Եգէականի մէջ Իտալիոյ գրաւած կղզիները գացող ուղեւորները պարտաւոր են իրենց անցագրիները վիզէ ընել տալ: Այս առթիւ Իտալական կառավարութիւնը օտար տէրութեանց հաղորդած է այս կղզիներուն Իտալական տնտեսները պարունակող ցանկ մը

(Նովայէ Վրէժիա)

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Վերափոխումն Ս. Կուսին	481
Ս. Պողոս եւ Քրիստոս	488
Իմաստութեան սկզբանց վրայ	492
Տեղեկագրականք	494

ԱՐՏՈՆԱՏԷՐ
ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿ ԼԵ



ՏԵՐԻԷՆԻՄԱՐԱԴԱՊԵՏ
ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Օսմանեան Գործակցական Ընկ. Էպուսուուս Գասէսի թիւ 27

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

«Արձագանգ» շաբաթաթերթիս Երկրորդ տարուան ա-
ռաջին վեցամսեայն Յուլիս 28|10 Օգոստոսին լրացած ը-
լալուն, նոյնին վեց ամսոյ համար բաժանորդ գրուած Պատ.
եւ Մեծ. ընթերցողաց կը յիշեցնեմք որպէսզի իրենց բաժա-
նորդութիւնը նորոգել հաճին թերթիս առաքման մէջ դա-
դարուն չ'ըլլալու համար:

Մեր բաժանորդաց ուշադրութիւնը կը հրաւիրենք թէ
Արձագանգիս հասցեն է,

Katoghiché Arzakank
5 Rue Baïram 5
Péra Constantinople

«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ ի Պատրիարքարան պատշօնական Շաբաթաբերրք, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծագիր էջերէ բաղկացած եւ ճոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյգ ամէն յուրերն՝ համառօտուած . որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաթերթ կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան Դիւնէ . արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արսասահման

Տարեկան Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին *Մանսա-Բուսայ* եւ կամ մէյ մէկ դրոցոց նամակադրուով :

Մէկ թիւ 1 Դահեկան



Նամակ . յօդուած եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին .

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց

Բերա

Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

5 Rue Baïram 5

Péra

Constantinople

ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանց կը հրատարակուի շաբաթ օրեր:

2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:

3.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:

4.— Յօդուածներու ձեռագիրներ պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:

5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կրկնատրուին: